Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Թ Ի Վ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԸ ՈՐՊԵՍ ՎՃԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան _____

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (հասցե՝ ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 10, ՀՎՀՀ՝ 02574955, Թ/Հ՝ 103002102509, ՀՀ ԿԲ, էլ. հասցե՝ info@armswissbank.am, հեռախոս՝ (+374)-60-757-000, (+374)-11-757-000), այսուհետ՝ «**Բանկ**», ի դեմս Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, ով գործում է համաձայն Բանկի կանոնադրության, մի կողմից, և

_____ (պետական գրանցման համար՝ _____, ՀՎՀՀ՝ _____, հասցե՝ **ՀՀ,** _____, էլ. հասցե՝ _____), այսուհետ՝ «**Կազմակերպություն**», ի դեմս տնօրեն _____ (անձը հաստատող փաստաթուղթ՝ _____, տրված՝ _____, _____-ի կողմից, հասցե՝ _____), ով գործում է համաձայն կանոնադրության, մյուս կողմից միասին անվանվելով «**Կողմեր**», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «**Պայմանագիր**», հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագիրը կարգավորում է ապրանքների/ծառայությունների/աշխատանքների դիմաց Ինտերնետ-խանութի միջոցով վճարային քարտերի վճարման գործարքների իրականացման կապակցությամբ Բանկի (հավաստագրված էքվայեր) և Կազմակերպության միջև փոխհարաբերությունները, ինչպես նաև Բանկի և Կազմակերպության միջև համապատասխան գործարքների գծով փոխհաշվարկների իրականացման կարգը:

1.2. Կազմակերպությունը Պայմանագրի համաձայն պարտավորվում է Քարտապաններին սպասարկել Ապրանքների/ծառայությունների դիմաց Ինտերնետի միջոցով վճարային քարտերի օգտագործմամբ վճարումներ կատարելիս, իսկ Բանկը Վճարահաշվարկային համակարգերի Կանոններին համապատասխան Բանկի Պրոցեսինգային կենտրոնի միջոցով ապահովում է գործարքների շուրջօրյա հավաստագրում և պրոցեսինգ /մուտքի վավերացում և մշակում/, որոնք իրականացվել են Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով՝ Քարտերի օգտագործմամբ: Բանկն իրականացնում է նաև փոխհաշվարկներ Կազմակերպության հետ՝ Պայմանագրի շրջանակներում իրականացվող գործարքների գծով:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2.1. Պայմանագրում գործածվող տերմինները մեկնաբանվում են համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի, Վճարահաշվարկային համակարգի Կանոնների, միջազգայնորեն ընդունված գործարար շրջանառության սովորույթների, և Պայմանագրի կնքման պահին ունեն հետևյալ իմաստները.

- **Վճարային քարտ (Քարտ)՝** Վճարահաշվարկային համակարգերի քարտեր, որոնք հանդիսանում են Քարտապանի բանկային հաշվից Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման միջոց:
- **Թողարկող/Էմիտենտ՝** բանկ կամ ֆինանսավարկային կազմակերպություն, որն իր երկրի օրենսդրության համաձայն իրականացնում է քարտերի թողարկում, ինչպես նաև քարտերի օգտագործմամբ գործարքներով փոխհաշվարկներ:
- **Ապրանքներ/ծառայություններ՝** Կազմակերպության կողմից Ինտերնետ-Խանութի միջոցով քարտապաններին իրացվող ապրանքներ, ծառայություններ կամ քարտապանների համար կատարվող աշխատանքներ, ինչպես նաև բարեգործական հիմնադրամներ կամ հասարակական կազմակերպություններ հանդիսացող Կազմակերպության կողմից հավաքագրվող/փոխանցվող գումարների ընդունում:
- **Քարպատան կամ Հաճախորդ՝** ֆիզիկական անձ, ով իրավունք ունի օգտագործելու Քարտը և այն օգտագործում է Վճարումներ կատարելու նպատակով:
- **Պրոցեսինգային կենտրոն՝** Բանկի պրոցեսինգային կենտրոն, որն իրականացնում է գործարքների հավաստագրումը: Հանդիսանում է իրավաբանական անձ կամ Բանկի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է վճարային քարտերով իրականացված գործարքների տեղեկատվության հավաքագրում, հավաստագրում, մշակում և հաշվարկների ուղարկում մասնակիցներին:
- **Ետգանձում (chargeback)՝** Քարտապանի կողմից գործարքի բողոքարկման հիման վրա էմիտենտի /թողարկողի/ կողմից Բանկի/ինտերնետ-խանութի/ հաշվից դրամական միջոցների պահում (գանձում)՝ համաձայն Վճարահաշվարկային համակարգի Կանոնների:

- **Վճարահաշվարկային համակարգ՝** վճարահաշվարկային համակարգեր, որոնց ապրանքային նշանի օգտագործմամբ Քարտերն ընդունվում են Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության Ինտերնետ-խանութների միջոցով ձեռք բերված Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարելիս: Նշված Վճարահաշվարկային համակարգերի ցանկը բերված է Պայմանագրին կից Հավելված 1-ում:
- **Վճարահաշվարկային համակարգի Կանոններ՝** փաստաթղթերի փաթեթ, որոնք կարգավորում են տվյալ Վճարահաշվարկային համակարգի անդամների գործունեությունը:
- **Ինտերնետ-խանութ՝** ծրագրային համալիր, որն էլեկտրոնային միջոցներով Ինտերնետում ապահովում է ապրանքների վաճառքի, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման պատվերների ընդունում, այդ պատվերների դիմաց վճարման ձևի ընտրություն (այդ թվում՝ Քարտի օգտագործմամբ) և Քարտապանին Ապրանքների/ծառայությունների տրամադրում (առաքում):
- **Կազմակերպության Ինտերնետ-խանութ՝** Ինտերնետ-խանութ, որի միջոցով Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունն իրականացնում է ապրանքների/ծառայությունների վաճառք Ինտերնետային միջավայրում:
- **Պատվեր՝** ապրանքների/ծառայությունների գնման/մատուցման պատվեր, որը ներկայացվում է Քարտապանի կողմից Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով, ինչպես նաև հիմնադրամ կամ հասարակական կազմակերպություն հանդիսացող Կազմակերպությանը Քարտապանի կողմից գումարի փոխանցում բարեգործական նպատակներով:
- **Գործարք/պատվերի վճարման գործարք (Վճարում)՝** Պատվերի դիմաց անկանխիկ վճարման գործարք, որն իրականացվում է Քարտի օգտագործմամբ Կազմակերպության ինտերնետ-խանութում:
- **Գործարքի հավաստագրում՝** Թողարկողից գործարքի իրականացման համար թույլտվության ստացում:
- **Հավաստագրման կոդ՝** տառաթվային կոդ, որը հանդիսանում է գործարքի իրականացման համար Թողարկողի կողմից թույլտվության ստացման հաստատում:
- **Գործարքի գումար՝** գումար, որը հավասար է Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Քարտի օգնությամբ ձեռք բերված այն Ապրանքների/ծառայությունների արժեքին, որի համար իրականացվել է գործարքի հավաստագրումը:
- **Բանկի տեղեկատվական համակարգեր (ԲՏՀ)՝** ապարատածրագրային համալիրներ, որոնք իրականացնում են Կազմակերպությունների Ինտերնետ-խանութների միջոցով Քարտերով իրականացված գործարքների հաշվարկում և մշակում:
- **Հատուցում՝** դրամական միջոցների գումար, որը փոխանցվում է Բանկի կողմից Կազմակերպությանը՝ ըստ կատարված գործարքի, որը հավասարարժեք է գործարքի գումարին՝ հանած Բանկի միջնորդավճարը (համաձայն Սակագների):
- **Սակագներ՝** Կազմակերպության սպասարկման համար Բանկի կողմից սահմանված Սակագներ (պայմանագրին կից Հավելված 2):
- **Ինտերնետ - վճարումների համակարգ՝** ապարատածրագրային համալիր, որն ապահովում է Կազմակերպության Ինտերնետ-խանութներից ձեռք բերվող ապրանքների/ծառայությունների դիմաց Քարտերի օգտագործմամբ վճարման գործարքների իրականացումը (վավերապայմանների մուտք):

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Կազմակերպությունը պարտավորվում է.**

3.1.1. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութի սպասարկման հայտի (Պայմանագրին կից Հավելված 3) ներկայացումը Բանկ՝ վերջինիս Ինտերնետ-խանութը Տեղեկատվական համակարգերում, այդ թվում՝ Պրոցեսինգային կենտրոնում գրամցան նպատակով:

3.1.2. Ապահովել Պայմանագրի 6-րդ գլխում բերված՝ Կազմակերպության Ինտերնետ-խանութով իրականացվող Ապրանքների/ծառայությունների իրացման հանդեպ պահանջների կատարումը:

3.1.3. Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքում Քարտապաններին տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների.

- տեղեկատվություն քարտերի տեսակի /VISA, MasterCard, ArCa/ մասին, որոնց օգտագործմամբ իրականացվում է Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարումը,
- տեղեկատվություն Ապրանքների/ծառայությունների մասին, որոնք վաճառվում/մատուցվում են Կազմակերպության կողմից (ապրանքների ցանկը, դրանց նկարագիրը, գները և այլն),
- տեղեկատվություն Պատվերի ձևակերպման և Քարտերով Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման մասին,
- տեղեկատվություն Քարտապաններին ապրանքների առաքման/ծառայությունների մատուցման/աշխատանքների մատուցման/աշխատանքների կատարման կամ բարեգործական նպատակներով գումարների ընդունման կարգի մասին,

- տեղեկատվություն պատվերի վճարման գործարքի չեղյալ հայտարարելու ընթացակարգի վերաբերյալ, որն իրականացվել է Քարտի օգտագործմամբ, ինչպես նաև չեղյալ հայտարարված գործարքների դրամական միջոցները Քարտապանին վերադարձնելու ընթացակարգի վերաբերյալ (հաշվի առնելով 3.1.4. կետը),
- տեղեկատվություն Քարտի օգտագործմամբ ձեռք բերված Ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման, ինչպես նաև Ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման գործարքների գծով դրամական միջոցները Քարտապանին վերադարձնելու ընթացակարգի մասին (հաշվի առնելով 3.1.4. կետը),
- տեղեկատվություն Կազմակերպության կոնտակտային տվյալների մասին (հեռախոս, իրավաբանական/փոստային հասցե, էլեկտրոնային փոստի հասցե):

3.1.4. Բանկի հետ նախապես համաձայնեցնել Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքում տեղադրվող տեղեկատվության բովանդակությունը, որը վերաբերում է Պատվերների վճարմանը, Պատվերների վճարման չեղյալ հայտարարմանը, Ապրանքներից/ծառայություններից հրաժարմանը, գործարքների գծով Քարտապանների հետ փոխհաշվարկների իրականացման կարգին: Ընդ որում, Կազմակերպության ինտերնետ-խանութի կայքում զետեղված ամբողջ տեղեկատվությունը բոլոր լեզուներով նույնական չլինելու դեպքում ողջ պատասխանատվությունը կրում է Կազմակերպությունը: Բանկի համապատասխան գրավոր հարցումը ստանալիս (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով) վերջինիս ներկայացնել (նաև նախքան Կազմակերպության ինտերնետ-խանութի՝ Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում գրանցելը) Քարտերի օգտագործմամբ Ապրանքների/ծառայությունների վաճառքի ընթացակարգի նկարագիրը, որը տեղադրվում է Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքում, ոչ ուշ, քան տվյալ ծանուցումը ստանալու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.5. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութում Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման համար ընդունելի վճարահաշվարկային համակարգերի ցանկում փոփոխություն կատարելը Բանկից համապատասխան գրավոր պահանջը Կազմակերպության կողմից ստանալու դեպքում (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով) ոչ ուշ, քան պահանջը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.6. Ինքնուրույն և սեփական միջոցների հաշվին ապահովել կապուղիների և ծրագրային ապահովման առկայությունը, որոնք անհրաժեշտ են Կազմակերպության Ինտերնետ-խանութի և Պրոցեսինգային կենտրոնի միջև տեղեկատվական փոխգործակցություն իրականացնելու համար՝ Բանկին նախապես տեղեկացնելով (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով) նշված աշխատանքների իրականացման ժամանակի մասին:

3.1.7. Ապահովել Քարտերի օգտագործմամբ Կազմակերպության Ինտերնետ-խանութից ձեռբերված Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման մասին հարցումների էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը Պրոցեսինգային կենտրոն գործարքի հավաստագրման համար:

3.1.8. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութներում Ինտերնետ-վճարումների Համակարգից էլեկտրոնային հաղորդագրությունների ընդունումը Պրոցեսինգային կենտրոնից ստացված գործարքի հավաստագրման արդյունքների հետ միասին:

3.1.9. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութի և Ինտերնետ-վճարումների Համակարգի, Կազմակերպության և Պրոցեսինգային կենտրոնի միջև տեղեկատվական փոխանակման ընթացքում տեղեկատվության պաշտպանվածությունը չարտոնված մուտքերից:

3.1.10. Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքում ապահովել Քարտապանների կողմից իրականացված գործարքների մասին վերջիններիս տեղեկատվության տրամադրումը:

3.1.11. Ապահովել Քարտապաններին Ապրանքների տրամադրման/ծառայությունների մատուցման, պատվերի վճարման գործարքի չեղյալ հայտարարման, ինչպես նաև ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման ընթացակարգերի իրականացումը՝ հաշվի առնելով Պայմանագրի 8-10-րդ գլուխներում շարադրված պայմանները:

3.1.12. Ապահովել տեղեկատվության ամբողջականությունը և պահպանումը Պատվերների դիմաց վճարումների, ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման գործարքների գծով, որոնք իրականացվել են Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Քարտերի օգտագործմամբ՝ գործարքի կատարման պահից սկսած 5 (հինգ) տարվա ընթացքում:

3.1.13. Բանկի գրավոր պահանջով վերջինիս տրամադրելԿազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով իրականացված գործարքների գծով տեղեկատվություն (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով), ինչպես նաև տրամադրել այլ բնույթի տեղեկատվություն՝ կապված նշված գործարքների հետ, Բանկի պահանջը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.14. Բանկին ապահովել մուտքի իրավունք (ոչ ադմինիստրավորման) Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքի բոլոր էջերին, այդ թվում՝ հատուկ գրանցում պահանջող էջերին:

3.1.15. Իրականացնել Կազմակերպության Ինտերնետ-խանութից Քարտերի օգտագործմամբ ձեռքբերված Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման և գործարքների փոխհաշվարկներ, ինչպես նաև այլ փոխհաշվարկներ Բանկի հետ՝ համաձայն Պայմանագրի 11-րդ գլխում սահմանված կարգի:

3.1.16. Ծանուցել Բանկին փոփոխությունների մասին՝ փոփոխության կատարման նախատեսվող օրվանից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ՝ էլեկտրոնային գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով):

3.1.17. Համաձայն Վճարային համակարգերի Կանոնների՝ Կազմակերպության Ինտերնետ-խանութում կեղծ, կորցրած, գողացված քարտերով գործարքներ իրականացնելու համար Վճարային համակարգերի կողմից Բանկի նկատմամբ տուգանք կիրառելու դեպքում Բանկին փոխհատուցել վճարված տուգանքի գումարը՝ Պայմանագրի 11.2.5. կետով նախատեսված կարգին համաձայն:

3.1.18. Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով կատարված գործարքների գծով հատուցում ստանալիս Կազմակերպության վավերապայմանների փոփոխման անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է նոր վավերապայմաններն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ Բանկին գրավոր կերպով տեղեկացնել այդ մասին:

3.1.19. Եթե Կազմակերպության առևտրի/սպասարկման կետի ոլորտը MasterCard վճարահաշվարկային համակարգի կողմից ներկայացված MRP (MasterCard Registration Program) պրոդուկտում գրանցման ենթակա կետ է, ապա Կազմակերպությունը պարտավորվում է Բանկին փոխհատուցել MasterCard վճարահաշվարկային համակարգի և ԱրՔա վճարահաշվարկային համակարգի կողմից գանձված/գանձվող *Կազմակերպությանը պատկանող յուրաքանչյուր* առևտրի/սպասարկման կետի համար տարեկան վճար: Վճարումը կատարվում է Բանկի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ Կազմակերպությանը վճարման պահանջը ներկայացնելուց 3 (երեք) բանկային օրվա ընթացքում ՀՀ դրամով: Վերոհիշյալ գումարի վճարման ժամկետի խախտման դեպքում Կազմակերպությունը Բանկին յուրաքանչյուր ուշացած օրվա համար վճարում է տույժ՝ գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.2. Կազմակերպությունն իրավունք ունի.

3.2.1. Պայմանագրի շրջանակներում Բանկից ստանալ փաստաթղթեր և տեղեկատվություն:

3.2.2. Ինքնուրույն սահմանել պարտադիր նշելու ենթակա վավերապայմանները, ինչպես նաև Քարտապանների կողմից Կազմակերպություն Ինտերնետ-խանութի կայքում Քարտերի օգտագործմամբ Պատվերների դիմաց վճարման ձևակերպման ընթացակարգը (բացառությամբ Պայմանագրի 7.2. կետում նշված դեպքերի):

3.2.3. Ինքնուրույն սահմանել Քարտապաններին Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքում Քարտերի օգտագործմամբ ապրանքների տրամադրման/ծառայությունների մատուցման ընթացակարգը (միջոցները և ժամկետները) (հաշվի առնելով Պայմանագրի 8.1. կետում շարադրված պայմանը):

3.2.4. Ինքնուրույն սահմանել Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքում քարտերի օգտագործմամբ ձեռքբերված ապրանքների/ծառայությունների վերադարձի ընթացակարգը (եղանակներն ու ժամկետները):

4. ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Բանկը պարտավորվում է.

4.1.1. Իրականացնել Կազմակերպության Ինտերնետ-խանութների գրանցումը Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում՝ համաձայն Պայմանագրի 6-րդ գլխով սահմանված կարգի:

4.1.2. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութից ստացված գործարքների հավաստագրում կատարելու մասին հարցումներ պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունների ընդունումը Պրոցեսինգային կենտրոնի կողմից:

4.1.3. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութների միջոցով իրականացվող գործարքների շուրջօրյա հավաստագրում (բացառությանբ Պայմանագրի 12.2., 12.3., 13.2., 14.2. կետերում նշված դեպքերի):

4.1.4. Ապահովել գործարքների հավաստագրման արդյունքներ պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը Պրոցեսինգային կենտրոնից Կազմակերպության Ինտերնետ-խանութին (Ինտերնետ-վճարումների Համակարգի միջոցով):

4.1.5. Կատարել հատուցման տրամադրումը/փոխանցումը Կազմակերպությանը քարտերի օգտագործմամբ Կազմակերպության Ինտերնետ-խանութից ձեռքբերված ապրանքների/ծառայությունների վճարման գործարքների գծով, ինչպես նաև կատարել այլ փոխհաշվարկներ Կազմակերպության հետ՝ Պայմանագրի 11-րդ գլխում նկարագրված կարգի համաձայն:

4.1.6. Կազմակերպությանը գրավոր ձևով ծանուցել (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով) այն ապրանքների/ծառայությունների կատեգորիաների մասին, որոնց դիմաց քարտերի օգտագործմամբ ինտերնետով վճարումն արգելված է՝ համաձայն Վճարային համակարգերի Կանոնների:

4.1.7. Ապահովել Կազմակերպության մուտքը/հասանելիությունը Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների Համակարգ՝ Քարտերի օգտագործմամբ Ինտերնետով Ապրանքների կամ ծառայությունների դիմաց վճարման գործարքներ իրականացնելու համար:

4.1.8. Ապահովել Վճարային համակարգերի և վերջիններիս PCIDSS ստանդարտից բխող պահանջների կատարումը՝ Քարտապանների մասին տեղեկատվության գաղտնիության ապահովման գծով:

4.1.9. Կազմակերպության գրավոր հարցման հիման վրա 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս գրավոր տեսքով ներկայացնել տեղեկատվություն Ինտերնետ-վճարումների Համակարգի միջոցով իրականացված Կազմակերպության Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարումների գծով նախկինում կատարված առավելագույնը 3 (երեք) տարվա վաղեմություն ունեցող գործարքների/գործառնությունների վերաբերյալ տվյալներ:

4.1.10. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Քարտերի օգտագործմամբ գործարքների/գործառնությունների իրականացում՝ համաձայն Պայմանագրի 7-րդ գլխում նշված կարգի:

4.1.11. Ապահովել ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման գործարքների/գործառնությունների չեղյալ հայտարարման գործընթացի իրականացումը՝ հաշվի առնելով Պայմանագրի 9-րդ, 10-րդ գլուխներում սահմանված պայմանները:

4.2. Բանկն իրավունք ունի.

4.2.1. Իրականացնել Պայմանագրի շրջանակներում փաստաթղթերի և տեղեկատվության փոխանցում/ստացում Կազմակերպությանը/Կազմակերպությունից:

4.2.2. Վճարահաշվարկային համակարգերին տրամադրել Պայմանագրի հետ կապված Բանկին հայտնի դարձած, Կազմակերպությանն առնչվող տեղեկատվություն (ներառյալ հետևյալ վավերապայմանները՝ իրավաբանական/փոստային հասցե, հեռախոսի/ֆաքսի համար, էլեկտրոնային փոստի/կայքի հասցե, բանկային վավերապայմաններ և այլն)՝ նշված տեղեկատվությունը Վճարային համակարգերի անվտանգության ապահովման և զեղծարարությունների կանխման գծով ծրագրերում օգտագործելու նպատակով:

4.2.3. Կազմակերպությունից պահանջել (այդ թվում՝ նախքան վերջինիս Ինտերնետ-խանութների գրանցումը Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում) Բանկ ներկայացնել Կազմակերպության Ինտերնետ-խանութների կայքերում տեղադրվող Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման, Քարտապաններին Ապրանքների/ծառայությունների տրամադրման, ինչպես նաև Պատվերների դիմաց վճարման գործարքների/գործառնությունների չեղյալ հայտարարման և ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման գործընթացների նկարագիրը:

4.2.4. Միակողմանիորեն փոփոխություններ կատարել այն վճարահաշվարկային համակարգերի ցանկում, որոնց ապրանքային նշանները կրող քարտերի օգտագործմամբ կատարվում է Կազմակերպության Ինտերնետ-խանութներում ձեռք բերվող Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարում (Պայմանագրին կից Հավելված 1)՝ այդ մասին գրավոր ձևով (փոստով՝ առաքման ծանուցմամբ/էլեկտրոնային փոստով՝ փոստային սերվերից ստացվող ծանուցմամբ) ծանուցելով Կազմակերպությանը ոչ ուշ, քան տվյալ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 30 (երեսուն) օր առաջ:

4.2.5. Միակողմանի փոփոխել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելվածները՝ Կազմակերպությանն ուղարկելով (փոստով՝ հետադարձ ծանուցմամբ/էլեկտրոնային փոստով՝ փոստային սերվերից ստացվող ծանուցմամբ) նոր ձևերը, որոնք ուժի մեջ են մտնում Բանկի կողմից փոստային առաքման կամ փոստային սերվերից ստացվող առաքման մասին ծանուցումը Կազմակերպության կողմից ստանալու պահից:

4.2.6. Աջակցել զեղծարարության դեպքերի հետաքննմանը Կազմակերպության Ինտերնետ-խանութով Քարտերի օգտագործմամբ գործարքներ/գոռծառնություններ իրականացնելիս, ինչպես նաև գործարքների/գործառնությունների հետաքննմանը, որոնց օրինականությունը կասկած է հարուցում, ներառյալ Բանկի լիազորված աշխատակիցների այցի հնարավորություն Կազմակերպության գտնվելու վայր և վերջինիս աշխատակիցներից բացատրություններ ստանալու հնարավորություն:

4.2.7. Միակողմանիորեն դադարեցնել քարտային գործառնությունների հավաստագրումը/ավտորիզացիան, եթե Բանկը տեղեկանա որ.

- Կազմակերպությունում կատարվել են զեղծարար քարտային գործառնություններ և/կամ Կազմակերպությունը մասնակցել է ոչ իրավաչափ կամ ապօրինի գործունեությանը,
- Պայմանագրի շրջանակներում Բանկին տրամադրված տեղեկությունները հավաստի չեն,

- Հաճախորդներին առաջարկված ապրանքները (աշխատանքները, ծառայությունները) չեն համապատասխանում Պայմանագրի կնքման ժամանակ Կազմակերպության կողմից Բանկին տրամադրված դիմումում նշված ապրանքների/ծառայությունների/աշխատանքների ցանկին,
- Կազմակերպությունը փոփոխություն է կատարել իր Ինտերնետ դոմեյնի անվանման մեջ առանց Բանկին նախնական ծանուցման,
- Կազմակերպությունը ծավալում է գործունեություն, որը կարող է վնասել Բանկի բարի համբավին,
- Ապրանքների վերադարձի (աշխատանքներից, ծառայություններից հրաժարվելու) դեպքում Կազմակերպությունը հրաժարվում է հատուցել դրամական միջոցները Քարտապանների հաշիվներին,
- Պայմանագրի 11.3. կետով սահմանված դեպքերում գործարքները կամ Ինտերնետ-խանութը դասվել են Fraud կատեգորիային:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏ-ԽԱՆՈՒԹԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

5.1. Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում Կազմակերպության Ինտերնետ-խանութի գրանցման համար Կազմակերպությունը պարտավորվում է Բանկին ներկայացնել պատշաճ ձևով ձևակերպված և Կազմակերպության լիազորված (իրավասու) անձանց կողմից ստորագրված Կազմակերպության Ինտերնետ-խանութի դիմումը (Պայմանագրին կից Հավելված 3):

5.2. Բանկը, ստանալով Կազմակերպության դիմումը և Ապրանքների/ծառայությունների ցանկը, իրականացնում է տվյալ փաստաթղթերում նշված տեղեկատվության իսկության ստուգում և կայացնում որոշում Դիմումում, Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում նշված Ինտերնետ-խանութի գրանցման հնարավորություն վերաբերյալ ոչ ուշ, քան դիմումը Բանկի կողմից ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5.3. Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում նշված Կազմակերպության Ինտերնետ-խանութի գրանցման վերաբերյալ դրական որոշում կայացնելու դեպքում, Բանկն իրականացնում է վերոհիշյալ գրանցումը ոչ ուշ, քան Բանկի կողմից դրական որոշում կայացնելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

5.4. Բանկն իրավասու է առանց Կազմակերպությանը պատճառների բացահայտման մերժել վերջինիս Ինտերնետ-խանութի գրանցումը Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում՝ այդ մասին Կազմակերպությանը ծանուցելով 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5.5. Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում գրանցված Կազմակերպության ինտերնետ-խանութի պարամետրերի փոփոխման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Բանկին ներկայացնել Կազմակերպության Ինտերնետ-խանութի պարամետրերի փոփոխման դիմում (Պայմանագրին կից հավելված 3)՝ նշելով Ինտերնետ-խանութի նոր պարամետրերը:

Բանկը, ստանալով վերոհիշյալ դիմումը, ապահովում է համապատասխան փոփոխությունների ներմուծումը Բանկի Տեղեկատվական համակարգեր և Պրոցեսինգային կենտրոն ոչ ուշ, քան տվյալ դիմումն ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏ-ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

6.1. Կազմակերպությունը պարտավորվում է.

6.1.1. Կազմակերպությունը պարտավոր է ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով ապրանքների/ծառայությունների վաճառքի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև Պայմանագրով սահմանված պահանջների կատարումը:

6.1.2. Չիրականացնել Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով ապրանքների/ծառայությունների վաճառք, որոնց վաճառքն արգելված է՝ համաձայն ՀՀ օրենսդրության, ինչպես նաև այնպիսի ապրանքների/ծառայությունների վաճառք, որոնց դիմաց վճարումը քարտերի օգտագործմամբ Ինտերնետի միջոցով արգելված է՝ համաձայն Վճարային համակարգերի Կանոնների:

6.1.3. Ապահովել Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով իրացվող ապրանքների/ծառայությունների կատեգորիաների մասին տեղեկատվության համապատասխանությունը Կազմակերպության կողմից Բանկին ներկայացվող Ապրանքների/ծառայությունների ցանկում նշված և Կազմակերպության համապատասխան Ինտերնետ-խանութի կայքում տեղադրված տեղեկատվությանը:

6.1.4. Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Ապրանքների/ծառայությունների մասին Բանկին ներկայացված Ապրանքների/ծառայությունների ցանկում նշված տեղեկատվության փոփոխման դեպքում Բանկին ներկայացնել տվյալ Ինտերնետ-խանութի մասով՝ նոր Ապրանքների/ծառայությունների ցանկ ոչ ուշ, քան տվյալ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 10 (տասը) աշխատանքային օր առաջ:

6.1.5. Բանկի պահանջով Կազմակերպության ինտերնետային կայքից, ինչպես նաև տվյալ Ինտերնետ-խանութի գծով Ապրանքների/ծառայությունների ցանկից հանել Բանկի կողմից նշված ապրանքների/ծառայությունների անվանումը (այն դեպքում, եթե տվյալ ապրանքների/ծառայությունների/աշխատանքների վճարումը Քարտերով Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով արգելված է՝ համաձայն ՀՀ օրենսդրության և/կամ Վճարային համակարգերի Կանոնների), ոչ ուշ, քան Բանկի համապատասխան ծանուցումը ստանալու օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

7. ԳՈՐԾԱՐՔԻ/ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության Ինտերնետ-խանութի մուտք/հասանելիություն ստանալուց հետո Քարտապանն իրականացնում է Ապրանքների/ծառայությունների ընտրություն և ձևակերպում Ապրանքների/ծառայությունների գնման/մատուցման Պատվեր:

7.2. Քարտապանի կողմից Պատվերը ձևակերպելիս Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայք ներմուծվող տվյալների ցանկը սահմանվում է և անհրաժեշտության դեպքում երթարկվում է փոփոխությունների Կազմակերպության կողմից ինքնուրույնաբար, բացառությանբ հետևյալ պայմանի, այն է՝ **Կազմակերպությունն իրավասու չէ Քարտապանից պահանջել Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայք ներմուծել ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է քարտային վավերապայմաններին (քարտի համար, գործողության ժամկետ, PIN կոդ, CVV2 կոդ և քարտի վրա նշված այլ տվյալներ):**

7.3. Պատվերի բարեհաջող ձևակերպումից հետո Քարտապանն ընտրում է Քարտի օգտագործմամբ Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման եղանակը և Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքից վերահասցեավորում է դեպի Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների Համակարգ՝ քարտային վավերապայմանների ներմուծման համար: Քարտապանի կողմից Ինտերնետով վճարումներ կատարելիս անհրաժեշտ քարտային վավերապայմանների ցանկը սահմանվում է համաձայն Վճարային համակարգերի Կանոնների:

7.4. Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների Համակարգում Քարտապանի կողմից Ինտերնետի միջոցով վճարում կատարելու համար անհրաժեշտ քարտային վավերապայմանների բարեհաջող մուտքագրումից հետո Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների Համակարգից իրականացվում է էլեկտրոնային հարցման փոխանցում Պրոցեսինգային կենտրոն՝ գործարքի վավերացում իրականացնելու համար: Պրոցեսինգային կենտրոնից հավաստագրման արդյունքները փոխանցվում են Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների համակարգ՝ դրանք քարտապանին տրամադրելու նպատակով: Ընդ որում.

- Գործարքի հավաստագրման դրական արդյունքի դեպքում (Էմիտենտից Հավաստագրման կոդը ստանալու դեպքում) Քարտապանը պետք է ստանա պատվերի դիմաց բարեհաջող վճարման մասին էլեկտրոնային հաղորդագրություն,
- Գործարքի հավաստագրման բացասական արդյունքի դեպքում (Էմիտենտից հավաստագրման իրականացման մերժում ստանալու դեպքում) Քարտապանը պետք է ստանա պատվերի դիմաց տվյալ քարտի օգտագործմամբ վճարման անհնարինության մասին էլեկտրոնային հաղորդագրություն:

7.5. Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների Համակարգում Քարտի օգտագործմամբ պատվերի դիմաց բարեհաջող վճարումից հետո, Քարտապանը վերահասցեավորվում է Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայք, որտեղ վերջինիս պետք է տրամադրվի իր կողմից կատարված գործարքի մասին հետևյալ տեղեկատվությունը.

- Ինտերնետ-խանութի անվանումը
- Ինտերնետ-խանութի կայքի հասցեն
- Պատվերի նույնականացման համարը (յուրահատուկ համար)
- Գործարքի ամսաթիվը
- Պատվերի արժեքը
- Քարտապանի անունը
- Հավաստագրման կոդը
- Քարտի օգտագործմամբ վճարված ապրանքների/ծառայությունների ցանկը
- Քարտապանին ապրանքների/ծառայությունների տրամադրման կարգը
- Ապրանքների վերադարձի/ծառայությունների հրաժարման կարգը
- Պատվերի դիմաց վճարման չեղյալ հայտարարման կարգը

Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել Քարտապանի կողմից վերոհիշյալ տեղեկատվության տպելու հնարավորությունը վերջինիս կողմից Կազմակերպության Ինտերնետ-խանութից ձեռք բերված ապրանքները/ծառայությունները/աշխատանքները ստանալիս՝ հետագա օգտագործման նպատակով, ինչպես նաև այն դեպքում, եթե Քարտապանը բողոքներ ունենա, իրականացված գործարքների վերաբերյալ:

Կազմակերպությունը նաև պարտավորվում է Քարտապանին վերջինիս խնդրանքով տրամադրել նմանատիպ փաստաթղթեր՝ ստորագրությանբ և Կազմակերպության կնիքով վավերացված:

8. ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8.1. Քարտապաններին Կազմակերպության կողմից ապրանքների/ծառայությունների տրամադրումն/առաքումն իրականացվում է միայն գործարքի հավաստագրման դրական արդյունքի դեպքում 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում:

8.2. Կազմակերպությունն ինքնուրույնաբար սահմանում է ապրանքների/ծառայությունների առաքման պարտականությունների իրականացման կարգը՝ Պայմանագրի 8.1. կետի պայմաններին համապատասխան:

9. ՔԱՐՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9.1. Կազմակերպությունը պետք է Քարտապանների համար ապահովի Պատվերի դիմաց վճարման գործարքի չեղյալ հայտարարման հնարավորությունը:

9.2. Քարպատանի կողմից Պատվերի դիմաց վճարման գործարքը կարող է չեղյալ հայտարարվել ցանկացած օրացուցային օրվա ընթացքում (ներառյալ ոչ աշխատանքային և տոնական օրերը):

9.3. Քարտապանի կողմից Պատվերի դիմաց վճարման գործարքի չեղյալ հայտարարման գործընթացը (ժամկետներն ու պայմանները) Կազմակերպությունը սահմանում է ինքնուրույնաբար, բացառությամբ հետևյալ պայմանի, այն է՝ Քարտի օգտագործմամբ կատարված Պատվերի դիմաց վճարման գործարքի չեղյալ հայտարարումը Քարտապանի կողմից կարող է կատարվել միայն պատվերի ամբողջ գումարի չափով: Պատվերի դիմաց վճարման գործարքի մասնակի չեղյալ հայտարարում չի թույլատրվում:

9.4. Պատվերի դիմաց վճարման չեղյալ հայտարարման գործարքի բարեհաջող ավարտից հետո Կազմակերպությունը պարտավորվում է Քարտապանին Ինտերնետ-խանութի կայքում և/կամ էլեկտրոնային հասցեին տրամադրել տեղեկատվություն պատվերի դիմաց վճարման գործարքը չեղյալ հայտարարելու մասին՝ նշելով պատվերի նույնակամացման համարը (յուրահատուկ համար), արժեքը, պատվերի դիմաց վճարման չեղյալ հայտարարման ամսաթիվը և Քարտապանին հասանելի դրամական միջոցների վերադարձի պայմանները, ինչպես նաև ապահովել Քարտապանի կողմից տվյալ տեղեկատվությունը տպելու հնարավորությունը:

9.5. Պատվերի դիմաց վճարման չեղյալ հայտարարման գործարքի մասին տեղեկատվությունը Կազմակերպությունը փոխանցում է Պրոցեսինգային կենտրոն: Տվյալ տեղեկատվության Պրոցեսինգային կենտրոնին տրամադրման կարգն ու ձևաչափը սահմանված են Արձանագրությամբ:

10. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10.1. Քարտապանի կողմից Կազմակերպության ապրանքների վերադարձ/ծառայություններից հրաժարման ընթացակարգը (ձևերն ու ժամկետները) սահմանվում է Կազմակերպության կողմից ինքնուրույնաբար:

10.2. Քարտապանի կողմից Կազմակերպության Ինտերնետ-խանութից քարտերի օգտագործմամբ ձեռք բերված Կազմակերպության ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման դեպքում թույլատրվում է պատվերի մեջ մտնող ապրանքներից/ծառայություններից մասնակի վերադարձ/հրաժարում:

10.3. Քարպատանների կողմից ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման մասին տեղեկատվությունը Կազմակերպությունը փոխանցում է Պրոցեսինգային կենտրոն: Տվյալ տեղեկատվության Պրոցեսինգային կենտրոնին տրամադրման կարգն ու ձևաչափը սահմանված են Արձանագրությամբ:

11. ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

11.1. Հաշվարկների կարգը.

11.1.1. Պայմանագրի շրջանակում Բանկի և Կազմակերպության միջև բոլոր հաշվարկներն իրականացվում են ՀՀ դրամով:

11.1.2. Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով քարտերի օգտագործմամբ իրականացված գործարքների գծով հաշվարկները Կողմերի միջև իրականացվում են հետևյալ կերպ.

- Բանկն իրականացնում է Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով կատարված գործարքների գծով վճարումներ Կազմակերպությանը,
- Բանկը Կազմակերպությունից գանձում է միջնորդավճարներ Վճարային համակարգերով և Քարտապանների հետ Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով կատարված գործարքների գծով հաշվարկների կատարման համար:

Վերոհիշյալ հաշվարկները կատարվում են Պայմանագրի 11.2., 11.3. կետերով սահմանված կարգին համաձայն:

11.2. Կազմակերպությանը հատուցում տրամադրելը.

11.2.1. Բանկը Կազմակերպությունից գանձում է միջնորդավճար (համաձայն Պայմանագրին կից Հավելված 2-ի) Վճարային համակարգերով և Քարտապանների հետ Ինտերնետի (Կազմակերպության Ինտերնետ-խանութի)

միջոցով քարտերի օգտագործմամբ կատարված գործարքների գծով հաշվարկների կատարման համար: Միջնորդավճարը Բանկը Կազմակերպությունից գանձում է վերջինիս կատարված գործարքների գծով հատուցումը տրամադրելիս/փոխանցելիս:

11.2.2. Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Քարտով կատարված գործարքի գումարը (հանած միջնորդավճարի գումարը) Բանկը մուտքագրում է Կազմակերպության Բանկում բացված թիվ _____ հաշվեհամարին՝ քարտով կատարված գործարքին վերաբերող տվյալներով ձևավորված էլեկտրոնային ֆայլը ստանալուց հետո՝ հետևյալ ժամկետներում.

- Ոչ «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնի անդամ բանկերի կողմից թողարկված Վիզա/Visa/ և ՄաստերՔարտ/MasterCard/ քարտերի դեպքում՝ 7 (յոթ) բանկային օրվա ընթացքում,
- «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնի անդամ բանկերի կողմից թողարկված ԱրՔա/ArCa/, Վիզա/Visa/ և ՄաստերՔարտ/MasterCard/ քարտերի դեպքում՝ 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

Հաշվարկները կատարվում են Կազմակերպությունների Ինտերնետ-խանութներով կատարված, Բանկի Տեղեկատվական համակարգերում և Պրոցեսինգային կենտրոնում առկա գործարքների մասին տվյալների հիման վրա, բացառությամբ Պայմանագրի 11.2.4. կետում նշված դեպքերի:

11.2.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Կազմակերպությանը հատուցման տրամադրման/փոխանցման ուշացման համար Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով կատարված գործարքների մասով, եթե նման ուշացումը կապված է Պայմանագրի 19-րդ գլխում նշված՝ Կազմակերպության վավերապայմանների փոփոխության մասին Բանկին ոչ պատշաճ ծանուցման, ինչպես նաև Կազմակերպության կողմից Պայմանագրի պայմանների խախտման հետ:

11.2.4. Կազմակերպության Ինտերնետ-խանութից Քարտերի օգտագործմամբ վճարված Պատվերի դիմաց վճարման չեղյալ հայտարարման (ծառայություններից հրաժարման, Քարտապանի կողմից վերադարձի) դեպքում Կազմակերպությունն իրականացնում է հատուցման գումարների վերադարձ Բանկին՝ Պայմանագրի 11.2.5-11.2.7. կետերով սահմանված կարգի համաձայն:

11.2.5. Կազմակերպությունը Բանկին է տալիս Կազմակերպության Ինտերնետ-խանութից քարտերի օգտագործմամբ կատարված գործարքների հատուցումների գումարների անակցեպտ գանձման իրավունք հետևյալ հիմքերով.

- Միջնորդավճար Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Ապրանքների/ծառայությունների իրացման ժամանակ Քարտերի օգտագործմամբ գործարքների գծով հաշվարկների կատարման համար (Պայմանագրի 11.2.1. կետ),
- Կազմակերպությանը վճարված գումարների վերադարձ Բանկին՝ Պատվերի դիմաց վճարման չեղյալ հայտարարման/ապրանքների վերադարձի/ծառայություններից հրաժարման գործարքների գծով (Պայ-մանագրի 11.2.4. կետ),
- Կազմակերպության կողմից միջոցների վերադարձ Բանկին պայմանագրի 11.3. կետով սահմանված դեպքերում,
- Պայմանագրի 3.1.17. կետով սահմանված տուգանքների վճարում,
- Կազմակերպության կողմից հետգանձման կամ զեղծարարության մասին վճարահաշվարկային համա-կարգերից հաշվետվություն ստանալու դեպքում գործարքի գումարի վճարում (chargeback),
- Բանկի կողմից Կազմակերպությանը առանց օրենքով և այլ իրավական ակտերով ու գործարքներով սահմանված հիմնավորումների փոխանցված միջոցների վերադարձ,
- Էմիտենտին վճարումների վերադարձի գծով Բանկի ծախսեր (Պայմանագրի 11.3. կետ):

11.2.6. Այն դեպքում, եթե անհնար է Կազմակերպության կողմից Պայմանագրի 11.2.5. կետում նշված գումարների վերադարձը/վճարումը Բանկին, Կազմակերպությունը Բանկին տալիս է իրավունք անակցեպտ կարգով Բանկում բացված Կազմակերպությանը պատկանող հաշիվներից գանձել Բանկին վճարման ենթակա գումարները:

11.2.7. Կազմակերպության կողմից Պայմանագրի 11.2.5. կետում նշված գումարների՝ Պայմանագրի 11.2.5-11.2.6. կետերով նախատեսված կարգով Բանկին վճարման անհնարինության դեպքում վճարումը կատարվում է պարտավորություն ձևավորման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Բանկի կողմից ներկայացված պահանջի հիման վրա: Վճարումը Կազմակերպության կողմից իրականացվում է պահանջի ներկայացման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետներում վճարում չկատարելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Բանկին վճարել տույժ՝ ժամկետանց պարտավորության գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով՝ վճարման կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

11.2.8. Բանկն իրավասու է հետաձգել, ինչպես նաև չտրամադրել Կազմակերպությանը հատուցման կատարված գործարքների գծով Պայմանագրի 11.3. կետով նախատեսված դեպքերում:

11.2.9. Կազմակերպությունն իրավունք ունի Բանկին ներկայացնել հիմնավորված բողոքներ՝ կապված Կազմակերպության Հաշվին փոխանցած (Հաշվից դուրս գրած դրամական միջոցների գծով՝ փոխանցման) դուրսգրման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում՝ Կողմերի միջև հաշվարկները համարվում են հաստատված:

11.3. Վիճահարույց վճարումներ, վճարումների վերադարձ.

11.3.1. Այն դեպքում, երբ Կազմակերպության Ինտերնետ-խանութով քարտերի օգտագործմամբ գործարքների գծով հատուցումն արդեն իրականացված է, Բանկն իրավունք ունի Պայմանագրի 11.2.5.-11.2.8. կետերով սահմանված կարգով պահել նշված գումարները, ինչպես նաև վաղաժամկետ լուծել Պայմանագիրը, հետևյալ դեպքերում.

- Եթե գործարքը կատարվել է Պայմանագրի պայմանների խախտմամբ,
- Բանկի կողմից Վճարահաշվարկային համակարգից կամ Էմիտենտ բանկից ծանուցում ստանալու դեպքում, այդ թվում՝ էլեկտրոնային տեսքով, այն մասին, որ Կազմակերպության Ինտերնետ-խանութում իրականացված գործարքը պատկանում է FRAUD կատեգորիային,
- Եթե Պայմանագրի Գլուխ 13-ում նշված աշխատանքների կատարման արդյունքում Քարտապանի քարտը գործարքի կատարման պահին ճանաչվել է կեղծված, գողացված/կորած:

11.3.2. Բանկն իրավունք ունի հետաձգել կատարված գործարքի դիմաց հատուցման տրամադրումը Կազմակերպությանը մինչև 180 (մեկ հարյուր ութսուն) օրացուցային օր ժամկետով, եթե վճարահաշվարկային համակարգերի կանոններով ավելի երկար ժամկետ չի պահանջվում (որի ընթացքում Էմիտեմտը համաձայն Վճարահաշվարկային համակարգերի Կանոնների՝ իրավունք ունի գործարքի դեմ բողոք ներկայացնել) այն դեպքում, եթե Կազմակերպության կողմից ուսումնասիրման համար Բանկ ներկայացված փաստաթղթերը (համաձայն Պայմանագրի 3.1.16. կետի)՝ ձևակերպված են Պայմանագրի պայմանների խախտմամբ: Նշված ժամկետը լրանալուց հետո Բանկը որոշում է կայացնում Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Վճարային համակարգից (Էմիտենտից) ստացված տեղեկության հիման վրա կատարված գործարքի գծով գումարի հատուցման տրամադրման կամ հատուցման տրամադրումից հրաժարվելու մասին: Կազմակերպությունը կրում է Բանկի կողմից Էմիտենտին վճարումների վերադարձի հետ կապված բոլոր ծախսերը:

11.3.3. Այն գործարքների դեպքում, երբ Կազմակերպությանը տրամադրվել է հատուցում, սակայն այնուհետև Էմիտենտի կողմից Բանկին ներկայացվել է հետգանձման պահանջ (chargeback), Կազմակերպությունը պարտավորվում է Բանկին փոխհատուցել տվյալ գործարքների գումարները: Ընդ որում, Բանկն իրավասու է Կազմակերպությունից պահանջել նմանատիպ գործարքների փոխհատուցումը, այդ թվում Պայմանագրի 11.2.3.-11.2.8. կետերով նախատեսված կարգով Պայմանագրի դադարեցման օրվանից 180 (մեկ հարյուր ութսուն) օրվա ընթացքում, եթե վճարահաշվարկային համակարգերի կանոններով ավելի երկար ժամկետ չի պահանջվում:

11.3.4. Բանկն իրավունք ունի հետաձգել կատարված գործարքի դիմաց հատուցման տրամադրումը Կազմակերպությանը կամ հատուցման տրամադրված լինելու դեպքում հաշվի ապասառեցումը վճարահաշվարկային համակարգերի կանոններով սահմանված ժամկետով, եթե Կազմակերպության Ինտերնետ-խանութում իրականացված գործարքները պատկանում են FRAUD կատեգորիային կամ Կազմակերպության Ինտերնետ-խանութը վճարահաշվարկային համակարգերի կանոններով դասակարգվել է որպես FRAUD առնտրային կետ:

12. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ)

12.1. Կասկածելի գործարքների հայտնաբերման նպատակով, ինչպես նաև քարտերով զեղծարար գործարքների կանխման գծով միջոցների ձեռնարկման նպատակով Բանկն իրավասու է՝

- Իրականացնել Կազմակերպության ինտերնետ-խանութներում կատարվող գործարքների հավաստագրման նպատակով պրոցեսինգային կենտրոն ներմուծվող հարցումներում պարունակվող տեղեկատվության վերահսկողություն (մոնիտորինգ և վերլուծություն),
- Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով իրացվող ապրանքների/ծառայությունների ցանկի վերահսկում (մոնիտորինգ և վերլուծություն)՝ Պայմանագրի 6-րդ գլխում նկարագրված Ինտերնետի միջոցով ապրանքների/ծառայությունների վաճառքի պայմաններին համապատասխան:

12.2. Բանկն իրավասու է կասեցնել Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով կատարվող գործարքների հավաստագրումը (այդ մասին գրավոր կամ բանավոր՝ հեռախոսազանգի միջոցով, տեղեկացնելով Կազմակերպությանը ոչ ուշ, քան գործարքների հավաստագրման կասեցման օրվան հաջորդող աշխատանքային օրը) հետևյալ դեպքերում.

- Եթե գործարքները կատարման պահին կասկած են հարուցում իրավաչափ լինելու առումով (Բանկի կողմից գործարքների վերահսկման/մոնիտորինգի/ արդյունքների մասին ստացված տեղեկատվության հիման վրա),
- Եթե Կազմակերպությունը խախտել է Պայմանագրի 6-րդ գլխում շարադրված Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով Ապրանքների/ծառայությունների վաճառքի պայմանները,
- Եթե Բանկը Վճարային համակարգից/Էմիտենտից ծանուցում է ստանում (այդ թվում՝ էլեկտրոնային տեսքով/ֆաքսով) այն մասին, որ Կազմակերպության Ինտերնետ-խանութում կատարված գործարքներն իրենց բնույթով հանդիսանում են զեղծարարական,
- Եթե Բանկը Վճարահաշվարկային համակարգից ծանուցում է ստանում (այդ թվում՝ էլեկտրոնային տեսքով/ֆաքսով) Կազմակերպության Ինտերնետ-խանութում գործարքների թույլատրելի (համաձայն Վճարահաշվարկային համակարգի Կանոնների) ամսական քանակի/գործարքների գծով շրջանառության ամսական մակարդակի գերազանցման մասին:

  Կազմակերպության Ինտերնետ-խանութով իրականացվող գործարքների հավաստագրման վերսկսման մասին որոշման կայացման համար Բանկն իրականացնում է վերոհիշյալ դեպքերի ուսումնասիրություն և գրավոր ձևով (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով) Կազմակերպությանը տեղեկացնում է կայացված որոշման մասին: Ընդ որում, դրական որոշման դեպքում Բանկը տվյալ ծանուցման մեջ Կազմակերպությանը տեղեկացնում է վերջինիս Ինտերնետ-խանութում գործարքների հավաստագրման վերսկսման ամսաթիվը: Վերսկսման ամսաթիվը չի կարող գերազանցել գործարքների վերսկսման մասին Բանկի որոշման ընդունման օրվանից 180 (մեկ հարյուր ութսուն) օրացուցային օրը:

13. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

13.1. Պայմանագրից բխող պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը կրում են պատասխանատվություն՝ համաձայն Պայմանագրի դրույթների և ՀՀ օրենսդրության:

13.2. Կողմերը պատասխանատվություն չեն կրում Պայմանագրի կատարման անհնարինության համար Կողմերի վերահսկողությունից դուրս գտնվող՝ ծրագրային ապահովման և էլեկտրոնային կապուղիների խափանման իրավիճակներում:

13.3. Կազմակերպությունը պարտավորվում է Բանկի պահանջով (ֆաքսով/փոստով/էլեկտրոնային փոստով ստացված) Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքերից հանել/ջնջել Բանկի կողմից նշված ցանկացած տեղեկատվություն՝ տեղադրված տվյալ կայքերում Վճարահաշվարկային համակարգերի մասին (այդ թվում՝ Վճարահաշվարկային համակարգերի լոգոտիպերը), նման պահանջ ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում:

13.4. Կողմերն ազատվում են Պայմանագրով նախատեսված պարտականությունների մասնակի կամ ամբողջական չկատարման համար պատասխանատվությունից այն դեպքում, եթե դա հետևանք է անհաղթահարելի ուժի, որոնց թվին են պատկանում այնպիսի իրադարձություններ, որոնք Կողմերը չէին կարող և պարտավոր չէին կանխատեսել, այդ թվում՝ տարերային աղետներ, ռազմական գործողություններ, զանգվածային գործադուլները, ինչպես նաև օրենսդրական ակտերի, կառավարության որոշումների և պետական իշխանության և կառավարման մարմինների կարգադրությունների, որոշումների ուժի մեջ մտնելը, որոնց կատարումը պարտադիր է Կողմերից մեկի համար և խոչընդոտում է Պայմանագրից բխող պարտականությունների կատարմանը (ֆորս-մաժոր): Ֆորս-մաժորային իրավիճակների ծագման դեպքում՝ Կողմը պարտավոր է դրանց ծագման պահից 7 օրացուցային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ձևով տեղեկացնել մյուս Կողմին:

13.5. Կազմակերպությունը պարտավորվում է Բանկին փոխհատուցել վերջինիս կողմից կրած բոլոր վնասները, եթե դրանք կապված են Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով ՀՀ օրենսդրությամբ արգելված ապրանքների/ծառայությունների վաճառքի հետ և արգելված են Ինտերնետով դրանց վաճառքի՝ համաձայն Վճարահաշվարկային համակարգերի Կանոնների, ինչպես նաև Բանկին փոխհատուցել վերջինիս կողմից կրած այլ վնասները՝ կապված Պայմանագրի շրջանակներում քարտերի օգտագործմամբ գործարքների կատարման հետ, եթե դրանք առաջացել են Կազմակերպության մեղքով:

14. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

14.1. Պայմանագրի պայմաններով չնախատեսված բոլոր դեպքերում Կողմերը ղեկավարվում են ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվ փաստաթղթերով, ինչպես նաև Վճարահաշվարկային համակարգերի կանոններով, իսկ դրանց կողմից համապատասխան հարաբերությունները չկարգավորելու դեպքում՝ նաև միջազգայնորեն ընդունված գործարար շրջանառության սովորույթներով:

14.2. Պայմանագրից բխող կամ վերջինիս առնչությամբ բոլոր տարաձայնությունները Կողմերը կփորձեն առաջնահերթության կարգով լուծել բանակցությունների միջոցով:

14.3. Պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15.1. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

15.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

15.3. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին Պայմանագրի մտադրյալ դադարեցումից 30 (երեսուն) օրացուցային օր առաջ: Պայմանագրի լուծմամբ չեն դադարում մինչև Պայմանագրի լուծման պահը Կողմերի ստանձնած պարտավորությունները:

15.4. Պայմանագրի լուծման մասին գրավոր ծանուցում ստանալիս մյուս Կողմը պարտավորվում է վերոհիշյալ գրավոր ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ներքոնշյալ գործողությունները.

- Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել վերջինիս Ինտերնետ-խանութներում քարտերի օգտագործմամբ դադարեցումը և Կազմակերպության կայքերից հանել Պայմանագրի շրջանակներում Քարտապաններին քարտերի օգտագործմամբ ապրանքների/ծառայությունների դիմաց վճարման հնարավորության մասին ցանկացած տեղեկատվություն (այդ թվում՝ Վճարային համակարգերի լոգոտիպերը): Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել նախքան պայմանագրի դադարեցումը կատարված վճարումների համար ապրանքների/ծառայությունների մատուցումը և դրանց հետ կապված հետագա հնարավոր հետգանձումների վճարումը:
- Բանկը պարտավորվում է ապահովել գործարքների հավաստագրման դադարեցումը:

15.5. Պայմանագրի 11.3.1. կետում նշված դեպքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում Բանկն իրավասու է միակողմանիորեն լուծել Պայմանագիրը առանց Պայմանագրի 15.3. կետում նշված ժամկետի պահպանման:

15.6. Պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են գրավոր ձևով՝ Պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագրերի ստորագրմամբ (բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի), որոնք հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում երկու Կողմերի ստորագրման պահից:

16. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

16.1. Պայմանագրին կից բոլոր Հավելվածները հանդիսանում են վերջինիս անբաժանելի մաս:

16.2. Կողմերն իրավունք չունեն Պայմանագրից բխող պարտականությունները զիջել երրորդ անձանց, եթե կողմերի համաձայնությանբ այլ բան սահմանված չէ:

16.3. Կողմերի կողմից Պայմանագրի առարկայի հետ կապված միմյանց տրամադրվող տեղեկատվությունը հանդիսանում է գաղտնի և կարող է տրամադրվել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված դեպքերում, իսկ այլ դեպքում՝ միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ:

16.4. Կողմերը համաձայն են ճանաչել Բանկի Տեղեկատվական համակարգերից և Պրոցեսինգային կենտրոնից, Վճարահաշվարկային համակարգերից /Էմիտենտներից/, քարտապաններից, Կազմակերպությունից կապի էլեկտրոնային/ֆաքսիմիլային/այլ միջոցներով ստացված էլեկտրոնային փաստաթղթերի տպված օրինակները, ինչպես նաև էլեկտրոնային-թվային ստորագրությամբ կամ անձի կողմից ձեռքով դրվող ստորագրության այլ անալոգով ստորագրված փաստաթղթերը որպես վեճերի լուծման ապացույցներ:

ԿՈՂՄԵՐ

<u>ԲԱՆԿ</u>	<u>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</u>
Գործադիր տնօրեն_____	Տնօրեն_____
ստորագրություն	ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ N: 1
_____ կնքված
Առևտրի և սպասարկման կետերի կողմից ինտերնետային կայքերում վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասին թիվ_____ Պայմանագրի

Վճարահաշվարկային համակարգերի ցանկ, որոնց Քարտերի օգտագործմամբ իրականացվում է Կազմակերպության Ինտերնետ-խանութի միջոցով ձեռքբերված ապրանքների/ծառայությունների դիմաց վճարում

	Վճարահաշվարկային համակարգի անվանում
1.	MasterCard
2.	ArCa
3.	Visa
4.	Amex

ՀԱՎԵԼՎԱԾ N: 2
_____ կնքված
Առևտրի և սպասարկման կետերի կողմից ինտերնետային կայքերում վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասին թիվ _____ Պայմանագրի

Կազմակերպության Ինտերնետ-խանութի սպասարկման «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի սակագներ

Քարտի տեսակ	Սակագին
ArCa	%
MasterCard և Visa	Ներքին՝ %, արտաքին՝ %

ԲԱՆԿ

Գործադիր տնօրեն_____
ստորագրություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն_____
ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ N: 3
_____ կնքված
Առևտրի և սպասարկման կետերի կողմից ինտերնետային կայքերում վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասին թիվ _____ Պայմանագրի

Կազմակերպության Ինտերնետ-խանութի սպասարկման (պարամետրերի փոփոխման) դիմում

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն իրավասու է ստուգել տրամադրված ֆինանսական և անձնական բնույթի տեղեկատվության իսկությունը: Վերոնշյալ տվյալների փոփոխության դեպքում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ողջամիտ ժամկետներում գրավոր կերպով կտեղեկացվի այդ մասին:

Հաստատում ենք տրամադրված տեղեկատվությունը:

Կազմակերպության իրավաբանական տվյալներ	
Հիմնական տեղեկություն	
Կազմակերպության իրավաբանական անվանումը (հայերենով)	
Կազմակերպության իրավաբանական անվանումը (անգլերենով)	
Իրավաբանական հասցե	
Կազմակերպության էլեկտրոնային փոստի հասցե	
ՀՎՀՀ	
Լիցենզիա, եթե կիրառելի է	
Գրանցման ամսաթիվը և վայրը/երկիրը	
Հարկային ռեզիդենտությունը (նշել երկիրը)	
Կազմակերպության բանկ	
Կազմակերպության բանկի ռեկվիզիտներ	
Կազմակերպության հ/հ	
Տնօրեն	
Հեռախոս	
Ֆաքս	
Ինտերնետային կայքի և քարտային գործարքների գծով պատասխանատու	
Պատասխանատուի հեռախոս	
Էլեկտրոնային հասցե	
Բաժնետերեր և սեփականատերեր	
Կազմակերպության Ինտերնետ-խանութի տվյալներ	
Ինտերնետ-խանութի անվանումը (հայերենով)	
Ինտերնետ-խանութի անվանումը (անգլերենով)	
Ինտերնետ-խանութի փաս.գործ. հասցե	
Կայքի ինտերնետային հասցե (URL)	
Կայքի իրական IP հասցե	
Ինտերնետ-խանութի գործունեության ոլորտը	
Business Profile Information/Գործարար բնութագրին վերաբերվող տեղեկություններ	
Գործունեության ոլորտ	
ՊՈՍ տերմինալի վաճառակետի դասի կոդը(MCC)	
Հիմնական գործունեության տեսակը (հակիրճ նկարագրություն)	
Գործունեության բնույթի հետ կապված ապրանքատեսակներ կամ ծառայություններ	

ԲԱՆԿ

Գործադիր տնօրեն_____

ստորագրություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն_____

ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ N: 4
_____ կնքված
Առևտրի և սպասարկման կետերի կողմից ինտերնետային
կայքերում վճարային քարտերը որպես վճարման
միջոց ընդունելու մասին թիվ _____ Պայմանագրի

Կազմակերպության կայքին ներկայացվող պահանջներ

1. **Կազմակերպության Ինտերնետ-խանութի կայքին ներկայացվող ընդհանուր պահանջներ.**
   - իրավաբանական անձը (կամ անհատ ձեռնարկատերը), որի անունով գրանցված է Կազմակերպության կայքի դոմեյնի անունը, համապատասխանում է Կազմակերպության իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը,
   - Կազմակերպության կայքի բոլոր ներքին էջերն ու հղումները գործող են և պատշաճ կերպով ենթարկվում են մշակման՝ վերջիններիս հարցումներ ուղղելիս,
   - Կազմակերպության կայքը չի գտնվում հոսթինգային ծառայություններ մատուցող անվճար սերվերների վրա (օրինակ՝ narod.ru, hostland.su, newmail.ru, km.ru և այլն), Ինտերնետ-խանութի էջերի դոմեյնը պետք է հանդիսանա երկրորդ մակարդակի դոմեյն կամ Ինտերնետ-խանութը պետք է գտնվի երրորդ մակարդակի դոմեյնի վրա, իսկ Կազմակերպության հիմնական կայքը՝ երկրորդ դոմեյնի վրա,
   - բոլոր էջերը, որոնք կապված են կայքի աշխատանքի հետ կամ ենթարկվում են կայքի հանդեպ առկա պահանջներին, գտնվում են միասնական դոմեյնի անվան տակ,
   - կայքում նշված է Կազմակերպության Ինտերնետ-խանութի մասին հետևյալ տեղեկատվությունը՝ իրավաբանական և փաստացի հասցեները (հասցեն չի կարող ցպահանջ լինել), կոնտակտային հեռախոսահամարներ և էլեկտրոնային փոստի հասցե, որոնցով հաճախորդը կարող է կապվել Ինտերնետ-խանութի սպասարկման ծառայության կամ ադմինիստրացիայի հետ,
   - կայքում առկա է վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների սպառողական բնութագրիչների ամբողջական նկարագիրը,

     <u>Նշում.</u> *Անհրաժեշտ է, որպեսզի ապրանքների/ծառայությունների անբավարար նկարագիրը պատճառ չհանդիսանա կատարված վճարման չեղյալ հայտարարման/վերադարձի համար:*

   - ապրանքների կամ ծառայությունների վերջնական գինը պատվերի վճարման պահին բանկային քարտի օգնությամբ համապատասխանում է ցանկացած այլ ձևով վճարման գնին՝ էլեկտրոնային դրամապանակներ/փողեր, բանկային փոխանցում, կանխիկ վճարում,
   - կայքում նշված են ապրանքների առաքման/ծառայությունների մատուցման պայմանները՝ ժամկետները, ձևերը, առաքման/մատուցման հնարավոր տարածաշրջանները (մարզեր, համայնքներ, երկրները), ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է բանկային քարտով վճարում կատարելուց հետո ապրանքի առաքման/ծառայության մատուցման մասին հստակ պատկերացում կազմելու համար,
   - կայքում առկա է դրամական միջոցների վերադարձի, միմյանց փոխարինող ապրանքների/ծառայությունների տրամադրման, գնորդի կողմից ապրանքից հրաժարվելու դեպքում ապրանքի փոխարինման կամ վերադարձի ընթացակարգերի նկարագիրը (եթե նման ընթացակարգեր նախատեսված չեն, ապա Կազմակերպությունը պարտավորվում է այդ մասին տեղեկացնել գնորդներին իր կայքէջերում),
   - Կազմակերպության կայքի գլխավոր էջում կամ վճարման էջում առկա են բոլոր վճարահաշվարկային համակարգերի լոգոտիպերը, որոնց քարտերը Կազմակերպությունն ընդունում է ապրանքների և ծառայությունների դիմաց վճարելիս (ArCa, MasterCard, Visa, MIR),
   - պատվերի ձևակերպման ժամանակ Կազմակերպության կայքէջերում գնորդի բանկային քարտի վավերապայմանները (PIN, CVC2/CVV2, Expiration Date) չեն պահանջում: Բանկային քարտով վճարում կատարելիս գնորդը վերահասցեավորվում է Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների Համակարգի պաշտպանված վճարային էջ,
   - պատվերի դիմաց վճարման ընթացակարգն ավարտելուց հետո Կազմակերպությունը գնորդին տրամադրում է ստացականի էլեկտրոնային օրինակը:

     <u>Նշում.</u> *ստացականի օրինակը կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով, փոխանցել զննիչին (browser) (եթե վավերացումն իրականացվել է իրական ժամանակի ռեժիմում) կամ կցվել տպված օրինակի տեսքով, եթե իրականացվում է ապրանքի առաքում:*

   - հակիրճ և հասկանալի սահմանված է գաղտնիության քաղաքականությունը, ինչը հասանելի կլինի կայքի գլխավոր էջից հղումների միջոցով,

- կայքը պետք է պարունակի սիմվոլ, նշան/համապատասխան կազմակերպության/, ինչը կհաստատի կայքում լրացվող ինֆորմացիայի գաղտնիության ապահովումը,
- գործարք կատարելիս պահանջել էլեկտրոնային փոստի հասցե/e-mail/,
- ընձեռել վճարման միջոցի ընտրության հնարավորություն,
- պատվերի կատարման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել էլեկտրոնային նամակ, ինչը կպարունակի պատվերի հաստատումն ու պատվերի ընդհանուր նկարագրությունը,
- էլեկտրոնայի փոստի միջոցով ապահովել առաքվող ապրանքների և ծառայությունների ուշացման մասին ինֆորմացիայի տրամադրում,
- սահմանել էլեկտրոնային փոստով ստացվող հարցումներին պատասխանելու ժամկետը և քաղաքականությունը:

2. **Պրոցեսինգային կենտրոնի Ինտերնետ-վճարումների Համակարգի անվտանգ կապուղու հետ ուղիղ կապ (Gateway Connection) օգտագործող Կազմակերպություններին ներկայացվող լրացուցիչ պահանջներ:**
   - ապահովված է SSL-հավաստագրի օգտագործմամբ գործարքների կատարման անվտանգությունը (HTTPS արձանագրությամբ պաշտպանված էջում),
   - եթե Կազմակերպությունն իրականացնելու է զնորդների քարտերի մասին տվյալների մշակում և պահպանում իր Ինտերնետ-խանութում, ապա Կազմակերպությունն պարտադիր պետք է ունենա Ինտերնետ-խանութի PCI DSS (PCI DSS Compliace) ստանդարտներին համապատասխանության գործող հավաստագիր (Payment Industry Data Security Standards-բանկային քարտերի տվյալների պահպանման անվտանգության ստանդարտներ): Ստանդարտները սահմանված են PCI DSS Խորհրդի կողմից, որը կազմված է վճարային խոշորագույն ասոցիացիաներից, որոնք նպատակ ունեն բարձրացնել քարտերի մասին տվյալների պահպանման անվտանգությունն ու հակազդել հնարավոր խարդախություններին:

3. **Հավաստագրման 3D Secure արձանագրություններ օգտագործող Կազմակերպություններին ներկայացվող լրացուցիչ պահանջներ:**
   - կայքում տեղադրված են ստանդարտացված և անփոփոխ լոգոտիպեր՝ «MasterCard Secure Code» և «Verified by Visa» լոգոտիպերը լրացուցիչ տեղադրել նաև անվտանգության մասին տեղեկատվություն պարունակող էջերում,
   - միայն մեկ էջում տեղադրված լինելու դեպքում «MasterCard Secure Code» և «Verified by Visa» լոգոտիպերը պետք է առանձնացված լինեն վճարային համակարգերի լոգոտիպերից «MasterCard Secure Code» և «Verified by Visa» լոգոտիպերի առվնազն քառապատիկ բարձրության չափով,
   - «MasterCard Secure Code» և «Verified by Visa» լոգոտիպերից յուրաքանչյուրը էջում առկա ցանկացած այլ տեղեկատվությունից պետք է առանձնացված լինի ավելի մեծ հեռավորության չափով, քան «MasterCard Secure Code» լոգոտիպի առաջին M և «Verified by Visa» լոգոտիպի առաջին V տառի բարձրությունը,
   - կայքում առկա է տեղեկատվություն գնորդների համար այն մասին, որ ապրանքների և ծառայությունների դիմաց քարտով վճարում կատարելիս օգտագործվում է 3D Secure տեխնոլոգիան՝ «MasterCard Secure Code» և «Verified by Visa»:

4. **Խաղային և ժամանցային պորտալներում տեղադրվող տեղեկատվություն (պահանջները նաև առնչվում են սպորտային տոտալիզատորներին և բուքմեյքերական գրասենյակներին, ինչպես նաև արժեթղթերի և FOREX տարադրամի միջազգային շուկաներում բրոքերային ծառայություններ մատուցող Կազմակերպություններին)**
   - ծանուցում տարիքային սահմանափակումների մասին, այն է՝ կայքում գրանցվել և ծառայություններից օգտվել թույլատրվում է միայն 18 (տասնութ) տարեկանից բարձր անձանց,
   - հնարավոր իրավաբանական սահմանափակումների մասին ծանուցում, այն է՝ Ինտերնետում շահումով խաղերն ու գրազները կարող են համարվել անօրինական համաձայն այն երկրի օրենսդրության, որում Դուք գտնվում էք: Դուք կրում եք պատասխանատվություն Ձեր երկրի օրենքներին չհետևելու համար Ինտերնետում շահումով խաղերի համար,
   - ծանուցում քարտապանների համար՝ ինքնուրույն պարզելու իրենց պարտականության մասին, թե արդյոք համապատասխան տեղական օրենսդրությունը թույլ է տալիս շահումով խաղերի համար Ինտերնետով քարտերի օգնությամբ վճարում,
   - կայքում ապրանքային/խաղային հաշվի համալրման պայմանների և սահմանափակումների նկարագիրը,
   - ապրանքային/խաղային հաշվից շահումների վճարման և դրամական միջոցների դուրսգրման կարգի, պայմանների և սահմանափակումների մանրամասն նկարագիրը:

5. **Պրոցեսինգային կենտրոնը/Բանկն իրավասու է չտրամադրել/կասեցնել բանկային քարտերով վճարումների մշակման ծառայություններն այն Կազմակերպություններին, որոնց գործունեությունը մասամբ կամ ամբողջովին կարող է դիտարկվել որպես հանցավոր, անօրինական կամ չհամապատասխանել Վճարահաշվարկային Համակարգի պահանջներին իրավաբանական կան էթիկայի տեսանկյունից:**

Ստորև ներկայացված է այդպիսի գործունեության տեսակների ցանկ, որը սպառիչ չէ և կարող է ընդգրկել նաև այլ գործունեության տեսակներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության կամ միջազգային համաձայնագրերի, որոնցով զբաղվող Կազմակերպություններին չեն տրամադրվում քարտով կատարված վճարումների գծով մշակման /պրոցեսինգի/ ծառայություններ.

- ահաբեկչություն, բռնություն, ազգամիջյան թշնամանք, ահաբեկչություն քարոզող արտադրանքի տարածում,
- հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացում (փողերի լվացում),
- գողություն, խարդախություն, զեղծարարություն, յուրացում կամ վատնում,
- կիբերհանցագործություններ, ներառյալ մանկական պոռնոգրաֆիա,
- արգելված թմրադեղերի և հոգեմետ նյութերի վաճառք,
- բարեգործություն, ներդրումներ, դրամական օգնություն առանց համապատասխան թույլտվությունների և կայքում հովանավորների և ֆոնդի ձևավորման մասին տեղեկատվության ամբողջական նկարագրի,
- ապրանքներ և ծառայություններ, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը կամ որոնց հանդեպ գործում են սահմանափակումներ կամ վաճառքի այլ կանոններ՝ համաձայն ՀՀ օրենսդրության,
- մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող ապրանքների/ծառայությունների վաճառք առանց իրավատերերի կամ հեղինակների հետ պայմանագրերի առկայության, որոնք հաստատում են Ինտերնետում դրանց վաճառքի թույլտվությունը,
- երաժշտական ֆայլերի վաճառք MP3,WAV ձևաչափերով՝ առանց թույլտվությունների,
- վիդեո, ֆոտո և այլ նյութերի վաճառք, որոնք հանդիսանում են հեղինակային իրավունքի օբյեկտներ առանց իրավատերերի հետ համապատասխան պայմանագրերի,
- վճարահաշվարկային համակարգեր, որոնք մատուցում են էլեկտրոնային տարադրամների փոխանակում կամ փոխարկում:

ԲԱՆԿ **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գործադիր տնօրեն_____ Տնօրեն_____

ստորագրություն ստորագրություն